Քայլ արեք ցանցում հետապնդումը և մերժումը վերացնելու համար

Ուսուցիչներին

EDUCATION FOR DEMOCRACY

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Լինել առցանց

Հասանելիություն և ներառում

Ոչ մի երեխա երբևիցե չպետք է իրեն մերժված զգա առցանց, կամ անցանց:

- Դպրոցում ստեղծեք դրական միջավայր, ուր յուրաքանչյուր աշակերտ ունի հավասար հնարավորություններ՝ անկախ իր սեռից, հաշմանդամությունից, ռասայից կամ մշակույթից:

Ուսուցում և ստեղծունակություն

Բարեկամական և խաղաղ միջավայրում, որտեղ երեխաները ազատ արտահայտում են իրենց մտքերն ու հարգալից վերաբերմունք վայելում, նրանք ավելի լավ են սովորում, իսկ հետապնդման դեպքերը ավելի սակավ են լինում:

- Դասարանում խմբային և համագործակցային աշխատանք անցկացրեք:
- Սովորեցրեք երեխաներին լսել և հարգել մյուսների կարծիքները, հասկանալ և գնահատել մյուսների հանդեպ արդարացի լինելու արժեքը:

Մեդիա և տեղեկատվական գրագիտություն

Համացանցը բաց միջավայր է, որտեղ մենք հաճախ կարող ենք հանդիպել ատելության խոսքի և վնասակար բովանդակության: Երեխաները պետք է իմանան ինչու և ինչպես հաղորդել կամ արգելափակել վիրավորական բովանդակությունը:

- Դասարանում կարդացեք մի հոդված, որում առկա է ատելության խոսք կամ ռասիզմի դրսևորում: Կազմեկերպեք քննարկում այն մասին, թե ինչու են նման նյութերը վնասակար և ինչ պետք է անել, երբ համացանցում նման նյութի եք հանդիպում:

Լինել ապահով առցանց

Էթիկա և Էմպաթիա

Հետապնդումները կարելի է կանխել, եթե բոլորս փորձենք հասկանալ և հարգել մյուսների զգացմունքներն ու տեսանկյունները:

- Քննարկեք հետապնդման տարբեր եղանակներ՝ մեկուսացում, մերժում, էմոցիոնալ կամ ֆիզիկական վնաս... Թող աշակերտները պատկերացնեն, որ իրենք են հայտնվել զոհի կարգավիճակում:

Առողջություն և բարօրություն

Կարևոր է, որ երեխան մեծանա զգալով իրեն ապահով և պաշտպանված իր շրջապատում՝ տանը կամ դպրոցում:

- Բարձրաձայն կարդացեք այն արտահայտությունները, որ երեխաները սովորաբար օգտագործում են բակում խաղալիս: Հանձնարարեք նրանց, որ նկարեն յուրաքանչյուր արտահայտությանը համապատասխանող մարդուկ-էմոջի:
- Համեմատեք էմոջիները՝ ցույց տալու համար թե ինչպես են տարբերվում իրենց մեկնաբանությունները:

Էլեկտրոնային ներկայություն և հաղորդակցություն

Հարգալից հաղորդակցման հմտությունը թվային քաղաքացու կերպարի անբաժան մասն է:

- Բացատրեք, թե ինչ է թվային հետքը և ինչ ազդեցություն կարող է ունենալ նեգատիվ թվային հետքը ուսման և աշխատանքի ապագա հնարավորության վրա:
- Քննարկեք վարքագծի այն ձևերը, որոնք կարող են բացասական անդրադառնան մեր թվային հետքի վրա:

Առցանց իրավունքներ

Ակտիվ մասնակցություն

Բուլինգը, կամ հետապնդումները կարող են ամբողջ կյանքի տևողությամբ առողջական, հասարակական և տնտեսական հետևանքներ ունենալ, և հետապնդողների և հետապնդվողների համար:

- Կազմակերպեք դերային խաղեր բուլինգի տարբեր դեպքերի մասին, որոնց ժամանակ երեխաները հերթով կներկայացնեն հետապնդողի, զոհի և դիտորդի դերերը: Այս խաղը կոգնի նրանց մտածելու իրենց գործողությունների մասին իրական իրավիճակներում:

Իրավունքներ և պարտականություններ

Յուրաքանչյուր ոք ունի հարգանքի իրավունք և պարտավոր է ուրիշներին վերաբերվել այնպես ինչպես կցանկանար, որ իրեն վերաբերվեն:

- Մշակեք դասարանի կամ դպրոցի հակա-բուլինգ (հակա-հետապնդման) քաղաքականություն, որը պետք է կարդան և ստորագրեն ուսուցիչներն ու աշակերտները: Այն պետք է իր մեջ ներառի աշակերտների միմյանց հանդեպ պարտավորությունները և հստակ մատնանշի անթուլատրելի վաքագծի հետևանքները:

Գաղտնիություն և անվտանգություն

Համացանցում անզգույշ կամ անփույթ վարքագիծը և անձնական տվյալների հրապարակումը, առանց հետևանքները հաշվի առնելու, կարող են հանգեցնել բուլինգի:

- Հանձնարարեք աշակերտներին տպագրել սոցիալական մեդիայի իրենց նկարագրում պարունակվող ինֆորմացիան և լուսանկարները և ցուցադրել դպրոցի մի հանրային տարածքում:
- Եթե նրանք անհարմար են զգում, բացատրեք, որ իրենց մասին տեղեկատվությունը չպաշտպանելու դեպքում միլիոնավոր մարդիկ աշխարհում կարող են այն տեսնել և օգտագործել իրենց դեմ:

Առցանց իրավունքներ

Սպառողի իրազեկում

Երեխաները գովազդի մշտական թիրախներ են, և նրանց ընտանիքները պետք է իրազեկված լինեն այս մասին: Բավարարելով երեխաների յուրաքանչյուր պահանջը նորագույն սարք ունենալու հարցում կարող է երեխայի մոտ իր մասին հատուկ կարծիք ձևավորել՝ հարվածելով իր ներսում բնածին էմպաթիային այլ մարդկանց հանդեպ:

- Դասարանում օգտագործեք համացանցային և տպագիր հանրահայտ գովազդներ նրանց ազդեցությունը մարդկանց վրա քննարկելու համար: Առանձին քննարկեք գովազդի ազդեցությունը խոցելի խմբերի վրա:

Օգնեք սովորողներին դիմակայել մարտահրավերներին

Թվային քաղաքացիական կրթության մասին Եվրոպայի խորհրդի այլ հրապարակումներ

- Educating for a video game culture – A map for teachers and parents (2021)
- Digital citizenship education - Trainers' Pack (2020)
- Digital Citizenship Education – Lesson plans for educators available at https://www.coe.int/en/web/education/new-materials
- Digital Citizenship Education Handbook (2019)
- Bullying: perspectives, practice and insights (2017)
- Internet Literacy Handbook (2017)

Լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել այստեղ՝
www.coe.int/education

Հեղինակներ՝
Janice Richardson
Veronica Samara

Թարգմանություն՝
Arsen Baghiyan

Safe.am

PREMS 074622

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE